

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 55.2-րդ հոդվածի 1-ին մասի, Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 13-ի «Մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 29-Ն որոշման դրույթներով և հիմք ընդունելով Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 25-ի թիվ 17-Ա որոշումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը հայտարարում է մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզավորման մրցույթ:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզավորման մրցույթի մասին

1. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը՝ մասնավոր մուլտիպլեքսորի գործունեություն:

2. Մրցույթի մասնակցին ներկայացվող պարտադիր պահանջները՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 55.1-րդ հոդվածի համաձայն մասնավոր մուլտիպլեքսորի գործունեությունը կարող է իրականացվել Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված իրավաբանական անձի կողմից, որի հիմնադրման (ստեղծման) ժամանակ կամ դրանից հետո օտարերկրյա կապիտալի մասնակցության բաժինը չպետք է հավասար կամ ավելի լինի հեռարձակող կազմակերպության որոշումների ընդունման համար անհրաժեշտ բաժնեմասերի 50 տոկոսից:

3. Անհրաժեշտ փաստաթղթեր՝

- 1) ապացույցներ հեռարձակման թվային ցանցը ստեղծելու և շահագործելու համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների վերաբերյալ,
- 2) ֆինանսական կարողությունները հիմնավորող փաստաթղթեր,
- 3) հեռարձակման թվային ցանցի ստեղծման նախագիծը, ներառյալ ցանցի գործարկման ժամանակացույցը:

4. Դիմումներն ընդունվում են 2017 թվականի մայիսի 2-ից մինչև 2017 թվականի օգոստոսի 2-ը ներառյալ, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 9:00-18:00: Դիմումները և կից փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով՝ ՀՀ, ք. Երևան, Իսահակյան 28 հասցեով:

5. Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել (010) 52 94 32 հեռախոսահամարով կամ գրել nctr@tvradio.am էլ. փոստի հասցեով:

6. Դիմումի ձևը՝

_____ ին
(անուն, ազգանուն)

ԴԻՄՈՒՄ

Մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզիա ստանալու

Դիմումատուի անվանումը _____

Գտնվելու վայրը _____

Գործունեության իրականացման վայրը _____

Հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. հասցեն _____

Պետական գրանցման համարը _____

Հարկ վճարողի հաշվառման համարը _____

Տեղեկություններ մուլտիպլեքսի կառուցման և գործարկման
համար անհրաժեշտ ռադիոհաճախականությունների մասին _____

Կից փաստաթղթեր.

1. ապացույցներ հեռարձակման թվային ցանցը ստեղծելու և շահագործելու
համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների վերաբերյալ _____ թերթ,
2. ֆինանսական կարողությունները հիմնավորող փաստաթղթեր _____ թերթ,
3. հեռարձակման թվային ցանցի ստեղծման նախագիծը,
ներառյալ ցանցի գործարկման ժամանակացույցը _____ թերթ:

Ընդամենը՝ _____ թերթ:

Տնօրեն _____
(անուն, ազգանուն)

_____ (ստորագրություն)

_____ (օրը, ամիսը, տարեթիվը)

Կ.Տ. (կնիքի առկայության դեպքում)